նոցա ամենեցուն եթէ երեքտասան 'ի մի և մետասան 'ի միւս կամս լիցեն, որում կողմ դտանելով միմիայն մի կամք յաւելի վճիռն 'ի կամս նոցա ելցէ և ճնացորդքն հնազանդել պարտ են 'ի առաւելութեան արանց կարծեաց։

ԳԼՈՒԽ ՄԽԷ.

Ամենայն պաշտօնատար պահել պարտ է ընդ իւր նամակ պաշտօնի իւրոյ հին և նոր առ 'ի վկայութիւն կրկին պաշտօնի հաստատել արժանաւորութիւնն իւր։

ԳԼՈՒԽ ՄԽԸ.

Ոռճիկ ամենայն պաշտօնատարի բայց 'ի փոխանորդաց յաշխարհաց ամենայն ամսի հատուցեալ լինիցի իշխանէն 'ի տեղի որում բնակի պաշտօնատարն հանելով 'ի նմանէ ըռսիտ։

ԳԼՈՒԽ ՄԽԹ.

Ով ոք որ շինեսցի տուն հարկ լիցի ստանալ հրաման ճարտարապետէ յաշխարհէն, և Օրինակ վասն խորութեան և հաստատութեան հիման և շարն փողոցին համահաւասարութեան և հեռաւորութիւն չափաւորութեան 'ի ամրոցէն։

ԳԼՈՒԽ ՄԾ.

Ամենայն տուն պարտ է տալ ջրհեղեղոյ հա-